արդարև այս ամենայն և ևս ամենայնի ըստ բիւր քան-
քարի առակի պարտապան եմք առ ի հատուցանել
բիւր բարեաց արժանի սուրբ լուսոյ մօրս և ծնօղիս
Սուրբ Էջմիածնի, քանզի նա է սկիզբն մեր առ Յի-
սուս Քրիստոս ի տէր մեր և կատարումն, և նորին
երկնեղուտ մեռոնաւն յօդեալ[1]) միանամք առ զլուխն
մեր Քրիստոս և ի նմանէ է լոյս երեսաց մերոց, որով
արժանաւորիմք տեսանել զլոյս(*)։ Եւ զի՞նչ կարո-
ղանամք հնարիլ յամենայնի յետնեալքս զփոխարէն
տրիտրոցն և զշնորհացն հատուցանել, բայց միայն
հանգոյն լումայի այրոյն, աւանդեալ հաստատեցաք
ի պատիւ գալստեան Հոգեւորտիրին, և հարազատօրէն
զծառայականն հատուցանել, այսինքն՝ յամենայն Շա-
բաթի առաւօտուն, ուր Սուրբ Երուսաղէմայ թագաւոր
բռնեն, ի նոյն տեղի լուսոյին գանձանակ, այսինքն է
թագաւոր բռնել աւանդեցաւ, զի իւրաքանչիւր զիւր
սուրբ հաւատոյ և զսիրոյ պտուղ՝ զողորմութիւնն հա-
տուցանելով, զվարձ և զաւրհնութիւն անդրանկա-
շնորհ հարազատիցն ընկալցին ի Քրիստոսէ Աստուծոյ։

Ի) Եւ յղեալ թուղթ առ Ներսէս կաթողիկոսն Սբսայ
բազում բանիւք թէ Զլինի որ նորա խաթրն մօտիք,
վասն Փիլիպպոս կաթողիկոսին, և նորա հրամանին
կանգնիք։ Քանզի Զատկիս, որ ՌՃԱ. էր թվական,
գնացին Բ կաթողիկոսքն ի յԵրուսաղէմ՝ երկրպագու-
թիւն սուրբ տեղեացն. վասն այսորիկ թուղթ գրեալ
առ կաթողիկոսն Սբսայ՝ թէ բնաւ Փիլիպպոսի զխօսսն
յառաջացուսցեն և այլ բազում բանս։

1) օդեալ.

(*) Լուս. Այլ և ի գալն իւր զարարողութիւն Էջմիա-
ծնին հաստատեաց յեկեղեցիս . . . եղծեալ էր։ Այլ և ի պա-
տիւ [կաթ]ողիկոսին յամենայն եկեղեցիս դարպա[սատ]ունս
չինեաց։